ԵՐԵՎԱՆԻ ԲԵԳԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ

Ս. Ս. ՄԿՐՏՉՅԱՆ

Անդրկովկասը Ռուսաստանին միացվելուց հետո կենտրոնական իշխանությունները մի շարք միջոցառումներ ձեռնարկեցին տեղում սոցիալ-դասակարգային կառուցվածքը որոշակի դարձնելու և օրենսդրական ակտերով կարգավորելու ուղղությամբ, որոնք կապահովեին ցարիզմի սոցիալական հենարանի ստեղծումն ու ամրապնդումը։ Դրանց թվում էին 1846 թ. սեպտեմբերի 6-ի ռեսկրիպտը, 1847 թ. կանոնադրությունները և բուն Երևանի նահանգին վերաբերող 1851 թ. հունիսի 8-ի կանոնադրությունը։ Առաջին երկուսը քիչ թե շատ հաջողությամբ կյանքի կոչվեցին, իսկ 1851 թ. օրենսդրական ակտն այդպես էլ չկիրառվեց։ Արդեն 1860-ական թվականների կեսերին այդ վիճակը ձեռնտու չէր ինչպես ցարական իշխանություններին, այնպես էլ տեղական արտոնյալ դասի ներկայացուցիչներին և «...նրանք սկսել էին բողոքել և՛ գույքային, և՛ իրավական տեսանկյունից իրենց անորոշ վիճակից»[1]։

Այդ հարցերը լուծելու մի փորձ էր նաև 1860-ական թվականների կեսերին ստեղծված բեգական հանձնաժողովների գործունեությունը։ Հանձնաժողովների աշխատանքը կարգավորելու նպատակով մշակվել էին հատուկ հրահանգներ։ Դրանցում պարզաբանվում էին ինչպես հանձնաժողովների ստեղծման նպատակը, այնպես էլ կազմը, աշխատակարգը, նախագահի և անդամների պարտականությունները, գործավարությունը և հաշվետության կարգը[2]։

Հրահանգի առաջին կետում Երևանի բեգական հանձնաժողովի ստեղծման նպատակ էր հայտարարվում «Երևանի և Նախիջևանի նախկին խանություններից կազմավորված նահանգի բոլոր գավառներում բարձր դասերին պատկանելության հայտնաբերումը և իրավունքների որոշումը»[3]։ Այդ նույն կետի ծանոթագրությունը պարզաբանում էր, որ բարձր դասերի անձնական իրավունքները բխեցվելու են սոսկ երկրամասում գոյություն ունեցող դասային ստորաբաժանումներից և որ կայսրության այս կամ այն արտոնյալ դասին այդ դասերի միակցման և նրանց իրավունքների հավասարեցման հարցը չի որոշվելու[4]։ Երկրորդ կետով հանձնաժողովին վերապահվում էր միայն այն ընտանիքների, տոհմերի և անձանց իրավունքների ձևակերպումը, որոնք կամ նրանց նախնիները պարսկական իշխանության օրոք կրել են «աղալար», «բեգ», «մելիք», «սուլթան», «խան» կոչումներից որևէ մեկը[5]։

Հանձնաժողովը իր առջև դրված խնդիրները պետք է իրագործեր նախ Երևանի, Էջմիածնի և Նոր Բայազետի գավառների սահմաններում, ապա Նախիջևանի և Օրդուբադի գավառներում։ Նրա նախագահը և գործավարը նշանակվելու էին Կովկասի փոխարքայի կողմից, իսկ անդամներն ընտրվելու էին արտոնյալ դասի այն ներկայացուցիչներից, որոնց իրավունքները կասկած չէին հարուցում։ Հանձնաժողովն ուղղակիորեն ենթարկվելու էր փոխարքային։

«Кавказъ» թերթում հրապարակելով իր գործունեությունը սկսելու հայտարարությունը, հանձնաժողովը պարտավորեցնում էր բոլոր նրանց, ովքեր

---

1 В. Рштуни, Крестьянская реформа в Армении в 1870 г., Ереван, 1974, с. 222.

2 ՀՀ պատմության պետական կենտրոնական արխիվ (հետագայում՝ ՀՀ ՊՊԿԱ), ֆ. 89, ց. 1, թ. 1—3։

3 Նույն տեղում, թ. 1։

4 Նույն տեղում։

5 Նույն տեղում։

Երևանի և Նախիջևանի նախկին խանություններում իրենց համարել են բարձր դասին պատկանող, մեկամսյա ժամկետում ներկայացնել ցուցակներ ընտանիքի արական սեռի բոլոր անդամների հիշատակությամբ[6]։

Ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ հրահանգում նշանակալից տեղ էր հատկացվում արտոնյալների շարքը դասվելու հավակնորդների նախորդ ժամանակաշրջանում ունեցած իրավունքների մանրակրկիտ ուսումնասիրմանը։ Այսպես, 13-րդ կետը պահանջում էր. «Դատելով ընտանիքի կամ տոհմի իրավունքի մասին բեգական կամ աղալարական կոչման հայցի վերաբերյալ, հանձնաժողովը ի հայտ է բերում.

1) Բեգական տոհմի, որից իրեն սերված է համարում խնդրատուն, այժմ ապրող կամ մահացած անդամներից պարսկական կառավարության օրոք ո՞վ է հատկապես օգտվել այդ կոչումից։

2) Իր հորից կամ պապից ժառանգաբա՞ր է օգտվել, թե՞ անձամբ շնորհ է ստացել պարսից շահից կամ թուրքական սուլթանից։

3) Եթե հայտնի է միայն, որ նա անձամբ է օգտվել բեգական կոչումից, ապա պարսկական կառավարության օրոք մուլքադարական իրավունքով տիրե՞լ է գյուղի, շարունակում են տիրե՞լ այն նա կամ նրա ժառանգները, իսկ եթե գյուղը դուրս է եկել նրանց տիրապետությունից, ապա ինչ պատճառով։

4) Որևէ պատճառով նա կամ նրա ժառանգներից մեկը չի ղրկվե՞լ արդյոք բեգական կոչումից պարսկական կամ մեր կառավարության օրոք»[7]։

Ինչ վերաբերում է նախկին տիրակալ խաներից կամ մահալների ու առանձին բնակավայրերի կառավարիչներ սուլթաններից և մելիքներից սերող ընտանիքներին, ապա նախապես պետք է պարզվեր նրանց ծագումը առաջինների ուղիղ արական գծից և ապա 13-րդ կետով պահանջվողը[8]։ Նման պարզաբանումներ էին հարկավոր նաև արտոնյալ դասին պատկանելության կոչումներ կրող թիուլատերերի վերաբերյալ։ Հանձնաժողովի ընտրովի անդամների միաձայն կարծիքը բավարար էր համարվում հայցվոր ընտանիքին բեգական կոչմանը դասելու կամ նրա հայցը մերժելու համար։

Ակներև է կենտրոնական իշխանության միտումը՝ խուսափելու իր սոցիալական հենարանը հանդիսացող արտոնյալների դաս հարկատուների դասի ներկայացուցիչների պատահական թափանցումից։ Անորոշ և կասկած հարուցող թեկնածությունները ենթակա էին հանձնաժողովի ընդլայնված կազմով նիստի քննարկմանը։ Ընդլայնված կազմը հանձնաժողովն էր՝ համալրված բեգական ընտանիքների 24 ավագագույն անդամներով։ Այս դեպքում վճռաբեկ էր համարվում ձայների 2/3-ից ավելին[9]։ Հրահանգի այս կետի պահանջների կիրառումով պարզաբանվեցին և հաստատվեցին կոլեգիական ասեսոր Մելիք Յակով Կյալովի, որը դեռևս 1844 թ. դիմել էր Թիֆլիսի ազնվականական դեպուտատական ժողովին՝ իր տոհմին ազնվականի կոչման շնորհման խնդրով, ընտանիքի արտոնյալ դասին պատկանելության իրավունքները[10]։

Ընտանիքների բեգական իրավունքների հետ միասին որոշվում էր նաև նրանց առկա կազմը[11]։

Բոլոր հարցերի վերջնական պարզաբանումից հետո հանձնաժողովը կազմելու էր ժառանգական և անձնական բեգերի կարգը դասվածների ու այդ կոչումները հայցող մերժվածների ընտանեկան ցուցակներ։ Մերժվածներին չէր արգելվում հետագայում կրկնելու հայցը և հիմնավորելու իրենց իրավունքները։

Կատարված աշխատանքների արդյունքները պետք է ներկայացվեին

6 Նույն տեղում, գ. 2, թ. 1։
7 Նույն տեղում, թ. 1—2։
8 Նույն տեղում, թ. 2։
9 Նույն տեղում։
10 Նույն տեղում, գ. 6, թ. 32—33։
11 Նույն տեղում, գ. 2, թ. 2։

Կովկասի փոխարքային։ Երևանի բեգական հանձնաժողովի հրահանգի տակ ստորագրել էին Կովկասի փոխարքայի Գլխավոր վարչության պետ, սենատոր, ստատս-քարտուղար բարոն Ա. Նիկոլային և Գլխավոր վարչության Դատական գործերի դեպարտամենտի դիրեկտոր իշխան Բագրատիոն-Մուխրանսկին։

Հրահանգի համաձայն կատարելով բեգական հանձնաժողովի անդամների ընտրությունը և նրանց ցուցակը Կովկասի փոխարքայի կողմից հաստատվելուց հետո, հանձնաժողովը 1865 թ. հունիսի կեսերից սկսեց իր աշխատանքները։ Յուրաքանչյուր գավառի համար ընտրվել էին հանձնաժողովի առանձին անդամներ և անդամության թեկնածուներ՝ Երևանի գավառում և Երևան քաղաքում, Օրդուբադի ու Նախիջևանի գավառներում 12-ական անդամներ և նույնքան անդամության թեկնածուներ[12], Նոր-Բայազետի գավառում՝ 1 անդամ և 1 թեկնածու, Էջմիածնի՝ 12 անդամ և 11 անդամության թեկնածու[13]։

Հանձնաժողովի անդամների իրավունքների և արտոնությունների ստուգման հիմք էին ծառայում ինչպես 1859 թ., այնպես էլ նախորդ տասնամյակների կամերալ նկարագրությունները և հանձնաժողովի անդամների կարծիքները։

Ընտրություններից անմիջապես հետո Օրդուբադի հանձնաժողովի անդամներից և թեկնածուներից 10-ի պատկանելությունը բարձր դասին կասկածի տակ դրվեց[14]։ Նրանք բեգական կոչմանն էին դասվել Մեղրու տեղամասում՝ 1849 թ.։ Այս դեպքում որոշվեց առաջնորդվել 1859 թ. կամերալ նկարագրության տվյալներով, որի համաձայն վերջիններս արտոնյալ դասի ներկայացուցիչների թվում էին։ Երևանի բեգական հանձնաժողովի կողմից դատական գործերի դեպարտամենտ ներկայացված տեղեկագրով, որը կազմվել էր նույն 1859 թ. կամերալ նկարագրության տվյալների հիման վրա, Օրդուբադի գավառի Օրդուբադի տեղամասում կային 41 բեգական ընտանիքներ, Մեղրու տեղամասում՝ 147, Նախիջևանի գավառի Դարալագյազի տեղամասում՝ 37, Նախիջևանի տեղամասում՝ 22 ընտանիքներ[15]։ Նախիջևան քաղաքում հաշվվում էին 60 խանական ընտանիքներ[16]։

Երևանի բեգական հանձնաժողովի աշխատանքներին անդրադարձել է Վ. Ոշտունին, իսկ Արևելյան Հայաստանի արտոնյալ դասի թվաքանակի, ներքին կառուցվածքի հարցերի կոնկրետ ուսումնասիրությամբ զբաղվել են Ա. Համբարյանը և Գ. Կիրակոսյանը։ Նրանց ուսումնասիրությունները նվիրված են XIX դ. 70—90-ական թվականներն ընդգրկող ժամանակաշրջանին[17]։ Բեգական հանձնաժողովի աշխատանքների ձեռնարկման նախօրյակին՝ 1865 թ., Երևանի նահանգի արտոնյալ դասի թվաքանակը հետևյալն էր. տղամարդ՝ 4930, կին՝ 4169, ընդամենը 9099[18]։

Հանձնաժողովն իր կատարած աշխատանքների վերաբերյալ պարբերաբար տեղեկագրեր էր ներկայացնում, որոնցում նշվում էր ստացված դիմումխնդրագրերի, դրական և բացասական որոշումների քանակը։ 1865 թ. հոկտեմբեր ամսվա ընթացքում կատարված աշխատանքների տեղեկագրի տվյալներով հանձնաժողովին դիմում ներկայացրած ընտանիքներից 43-ի կազմի մասին պահանջվում էին լրացուցիչ տվյալներ, 67 ընտանիքների հայցը մերժվել էր, 145-ի իրավունքների քննարկումը հետաձգվել էր մինչև հանձ-

12 Նույն տեղում, գ. 3, թ. 3, 138։

13 Նույն տեղում, թ. 4։

14 Նույն տեղում, թ. 33։

15 ՀՀ ՊՊԿԱ, ֆ. 89, ց. 1, գ. 3, թ. 53։

16 Նույն տեղում, թ. 56։

17 Վ. Ռշտունի, նշվ. աշխ., Ա. Ս. Համբարյան, Արևելյան Հայաստանի արտոնյալ դասի թվաքանակն ու ազգային կազմը 19-րդ դ. 2-րդ կեսին (ՀԽՍՀ ԳԱ Լրաբեր հասարակական գիտությունների, 1982, № 6), Գ. Լ. Կիրակոսյան, Արտոնյալ դասերը Արևելյան Հայաստանի բնակչության կազմում (19-րդ դ. 80—90-ական թթ.), (ՀԽՍՀ ԳԱ Լրաբեր հասարակական գիտությունների, 1986, № 11)։

18 Ա. Համբարյան, նշվ. աշխ., էջ 14։

նաժոզովի ընդլայնված կազմի նիստի գումարումը, իսկ 302 ընտանիքներ ստացել էին դրական պատասխան[19]։

Նոյեմբեր ամսվա արդյունքները հետևյալն էին. լրացուցիչ տվյալներ՝ 4 ընտանիքի մասին, մերժում՝ 2 ընտանիքի, թողնվել է ընդլայնված նիստի քննարկմանը՝ 40, բեգական կոչման մեջ հաստատվածներ՝ 16 ընտանիք[20]։

1866 թ. տարբեր ամիսների համար ներկայացված տեղեկագրերը ամփոփում էին մի փոքր այլ բնույթի տվյալներ (աղյուսակ № 1)[21]։

Աղյուսակ № 1

	Տոհմեր	Ընտանիքներ	Անձինք, որոնց անունով պետք է տրվեն վկայականներ
Կայացվել են վերջնական որոշումներ ճանաչման մասին	18	27	127
Պահանջվում է հավաստում	—	—	8
Կարծիքների անբավարարության պատճառով որոշումը հետաձգվել է	3	4	22
Ընդամենը	21	31	157

Այս տեղեկագիրն արտացոլում էր 1866 թ. մայիսի կեսերից մինչև հունիսի կեսերը կատարված աշխատանքի արդյունքները։

Այլ տեսք ունի նոյեմբեր-դեկտեմբեր ամիսների տեղեկագիրը (աղյուսակ № 2)[22]։

Աղյուսակ № 2

	Տոհմեր	Ընտանիքներ
Ճանաչվել են	18	48
Չեն ճանաչվել	10	27
Թողնվել են հանձնաժողովի ընդլայնված կազմի քննարկմանը	13	66
Ընդհանրապես քննարկման են ենթարկվել	41	141

Նմանօրինակ տեղեկագրեր ներկայացվել էին նաև հանձնաժողովի 1867 թ. գործունեության վերաբերյալ։

Նախիջևանի գավառում Երևանի բեգական հանձնաժողովը իր աշխատանքը սկսեց 1865 թ. սեպտեմբերի 1-ին և ավարտեց 1866 թ. ապրիլի 13-ին[23]։

Այդ աշխատանքի արդյունքները ամփոփված են № 3 աղյուսակում։

Աղյուսակ № 3

	Տոհմեր	Ընտանիքներ	Անձինք, որոնց անունով պետք է տրվեն վկայականներ
Բարձր դասին պատկանելության հայց է ներկայացվել	159	259	784
Նրանցից ճանաչվել են ժառանգական բեգական կոչմանը պատկանող	54	128	445
Անձնական բեգական կոչմանը պատ.	11	12	34
Ընդամենը	65	140	479
Մերժվել են	92	116	294
Ներկայացվում է Նորին կայսերական մեծության բարեհաճությանը	2	3	1[illegible]

19 ՀՀ ՊՊԿԱ, ֆ. 89, ց. 1, գ. 3, թ. 95

20 Նույն տեղում, թ. 152։

21 Նույն տեղում, թ. 168։

22 Նույն տեղում, թ. 197։

23 Նույն տեղում, թ. 160։

Հայց ներկայացրած 784 անձանցից վերջին կամերալ նկարագրությունում (1859 թ.) բեգերի թվում գրանցված էին 530-ը, հարկատուների՝ 177-ը, իսկ 77-ը ընդհանրապես գրանցված չէին[24]։ Հանձնաժողովը ներկայացված հայցերը քննարկում էր առանձին-առանձին և ընդունում համապատասխան որոշում։ Բերենք մի օրինակ. 1866 թ. մարտի 19-ի № 88 որոշումով ժառանգական բեգական կոչմանը դասվեցին Մելիք Ստեփանի ժառանգները և տոհմի մյուս ներկայացուցիչները[25]։ Պարզելով, որ հայց ներկայացնողները, իրոք, Բուրքիայում մահալի նախկին կառավարիչ Մելիք Ստեփանի որդիներն են և նրանցից ոչ ոք ո՛չ նախկին, ո՛չ էլ ռուսական կառավարության օրոք չի զրկվել իր կոչումից, հանձնաժողովը որոշեց. «1. Ընտրովի անդամների միաձայն կարծիքի և հրահանգի 17, 18, 19 ու 2 կետերի հիման վրա Մելիք Ստեփանյանների ընտանիքը ճանաչել մելիքական տոհմից և դասել ժառանգական բեգերի կարգը...»[26]։ Ապա որոշման մեջ թվարկվում էին տոհմի բոլոր անդամները[27]։

Հանձնաժողովի գործունեության ընթացքում ստացվում էին բազմաթիվ բողոքներ՝ ուղղված Կովկասի փոխարքային։ Դրանց հեղինակները բեգական կոչում հայցող մերժված անձիք էին և բողոքում էին չարաշահումների դեմ։ Բողոքագրերից մեկում նշվում էր, որ հանձնաժողովը «որպես բեգեր է ճանաչում միայն այն անձանց, որոնք չեն հրաժարվում նրանց կաշառքներ տալ...» և, որ «հանձնաժողովի անդամները մինչ այժմ տարբեր անձանցից կաշառք են ստացել մինչև 35 հազ. ռուբ.»[28]։ Հաշվի առնելով բողոքագրի հեղինակների իրավունքների ճանաչման մերժման հանգամանքը, դժվար է անէոկբայորեն հավատ ընծայել նշված փաստերին, սակայն չարաշահումների դեպքերն իրոք առկա էին։ Պետք է նշել, որ այդպիսի դիմում-բողոքների հիմնական մասի բովանդակությունը ոչ թե մեղադրանքներն էին հանձնաժողովի անդամների հասցեին, այլ իրենց իրավունքները հավաստող ապացույցների շարադրանքը։ Եվ չնայած բազմաթիվ և բազմազան շահական հրովարտակների հիշատակությանը, հանձնաժողովն իր մերժումների մեծ մասը հիմնավորում էր «հրահանգի» 2 կետով, այն է՝ բոլոր այդ տոհմերը և առանձին անձինք ռուսական իշխանության օրոք են արդեն վերաբնակվել Երևանի և Նախիջևանի նախկին խանությունների սահմաններում[29]։

Երևանի բեգական հանձնաժողովը դասային իրավունքների ճանաչման քննարկումները ավարտեց 1867 թ. հունիսի 10-ին[30]։

Այսպիսով, հանձնաժողովը Երևանի, Էջմիածնի և Նոր Բայազետի գավառներում ուսումնասիրեց 1483 ընտանիքների հայց՝ ժառանգական բեգական կոչմանը դասվելու հավակնությամբ։ Ճանաչվեցին 516 ընտանիքների իրավունքները[31]։ Նախիջևանի և Օրդուբադի գավառներում քննարկվեց 259 ընտանիքների հայց, որոնցից 128-ը դասվեցին ժառանգական բեգական կոչմանը, իսկ 12-ը՝ անձնական բեգական կոչմանը[32]։ Լրացուցիչ քննարկվեցին նաև բողոքարկված որոշումներով գործեր։ Երևանի, Էջմիածնի և Նոր Բայազետի գավառներում՝ 40, իսկ Նախիջևանի և Օրդուբադի՝ 39։ Հիմնականում դրանք նորից մերժվեցին։

Այսքանով արտոնյալների իրավունքների ճանաչումը չավարտվեց և Կովկասի փոխարքայի Գլխավոր վարչության խորհրդի և Կովկասի քաղաքացիա-

---

24 Նույն տեղում։
25 Նույն տեղում, գ. 4, թ. 107։
26 Նույն տեղում, թ. 109։
27 Նույն տեղում, թ. 110։
28 Նույն տեղում, թ. 56—57։
29 Նույն տեղում, գ. 5, թ. 233։
30 Նույն տեղում, թ. 307։
31 Նույն տեղում, գ. 3, թ. 95, 138, 152, 168, 199, 201, 267։
32 Նույն տեղում, թ. 160։

կան մասի կառավարչի խորհրդի 1874 թ. որոշմամբ Նախիջևանի և Օրդուբադի գավառներում 5 անձնական բեգեր ղրկվեցին իրենց կոչումներից[33]:

Վ. Ռշտունու նշված աշխատությունում բերված մի քանի տվյալներ չեն համընկնում մեր տրամադրության տակ եղած նյութերից բխող եզրահանգումներին։ Օրինակ, նա հանձնաժողովի աշխատանքների սկիզբը թվագրում է 1866 թ. մայիսի 23-ով, այն դեպքում, երբ դրանք տկսվել էին, ինչպես արդեն նշել ենք, 1865 թ. հունիսի կեսին և հոկտեմբերին ներկայացվել էին առաջին ընդհանրացնող թվերը։ Նախիջևանի և Օրդուբադի գավառներում, ըստ Վ. Ռշտունու, ճանաչվել են 128 և մերժվել 116 տոհմերի իրավունքները, իսկ իրականում այդ թվերը վերաբերում՝ են ոչ թե տոհմերին, այլ ընտանիքներին[34]։ Բեգական կոչմանն արժանացած անձինք անվանվելու էին մահմեդական բարձր դասին պատկանող։ Սակայն այս անվանումը, ինչպես նշում է Ա. Համբարյանը, լրիվ չի արտացոլում իրողությունը, քանի որ անտեսում է հայ արտոնյալներին[35]։ Բեգական հանձնաժողովների աշխատանքն Արևելյան Հայաստանի սոցիալ-դասակարգային կառուցվածքի պատկերի պարզաբանում էր՝ 1870 թ. իրագործվելիք ռեֆորմի նախօրեին։ Այն բավականին հաջող էր՝ ի տարբերություն նախորդ նմանօրինակ փորձերի։

ЕРЕВАНСКАЯ БЕКСКАЯ КОМИССИЯ

С. С. МКРТЧЯН

Резюме

После присоединения Закавказья к России центральные власти провели ряд мероприятий для упорядочения социально-классовой структуры края. Но они не дали желаемых результатов.

Ереванская бекская комиссия начала свою работу в июне 1865 г. и завершила ее 10 июня 1867 г. Она занималась разбором и выявлением прав тех, кто причислял себя к высшему сословию. Комиссия вела свою работу в Ереванской, Эчмиадзинской, Новобаязетской, Нахичеванской и Ордубатской провинциях. Комиссия признала принадлежащими к высшему сословию 516 семей.

YEREYAN COMMINSION OF BEKS

S. S. MKRTCHIAN

Summary

After the joining of Transcaucasus to Russia central powers put into practice a number of actions to regulate social-classical structure of the country. But they didn't give the desired results.

Yerevan's beks commission began its work in June of 1865 and completed it the 10th of June of 1867. It was occupied with the analysis and revealing of rights of those, who numbered themselves to the high estate. Commission led its work in Yerevan, Echmiadzin, Newbajazed, Nakhidzevan and Ordubad provinces. Commission recognized 516 families belonging to high estate.

---

33 Նույն տեղում, գ. 8, թ. 7—11։

34 Վ. Ռշտունի, նշվ. աշխ., էջ 223։

35 Ա. Ս. Համբարյան, նշվ. աշխ., էջ 45։